

"ԵՄ" ՊՐՈԲԼԵՄԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Ազատագրում Մաս 2

«Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս:» Հակոբոս 4:6

- * **Լավ հպարտություն:** Ինքնագնահատում, արժանապատվություն, լավ արած գործի համար բավարարվածություն: Ուրախանալ ուրիշների հաջողությունը տեսնելով (Գաղատացիս 6:4, Բ Կորնթ 7:4)
- * **Վատ հպարտություն:** Ինքնահավանություն, անձնասիրություն. "Ինձնից լավը չկա" (Առակաց 16:5, 18, 29:23)

Ա – Ինչպե՞ս է հպարտությունը առաջ բերում պրոբլեմներ

1. Հպարտությունը հետ է պահում ինձ աճելուց

«Տեսե՛լ էս մեկ ինքն իր աչքին իմաստուն երևացող. հիմարիցն ավելի հույս կա քան թե նրանից:» Առակաց 26:12

«Խրատ պահելը ճանապարհ է դեպի կյանք, բայց հանդիմանությունը ձգողը մոլորում է:» Առակաց 10:17

2. Հպարտությունը թունավորում է իմ փոխհարաբերությունները

«Միմիայն կռիվ կծագի ամբարտավանությունից:» Առակաց 13:10

«Կեղծավոր, առաջ քո աչքիցը գերանը հանիր, և հետո մտիկ կ'տաս քո եղբոր աչքիցը շյուղը հանելու:» Մատթեոս 7:5

3. Հպարտությունը բերում է ստրեսներ և անհանգստություններ

«Մարդի վախը որոգայթի մեջ կ'զգի...» Առակաց 29:25

«Մարդիս հոգին Տիրոջ ճրագն է. նա քննում է սրտի բոլոր ներսերը:» Առակաց 20:27

«Երանի հեզերին...» Մատթեոս 5:5

Բ – Ինչպե՞ս լինել խոնարհ ու երջանիկ

1. Անկեղծորեն խոստովանել իմ թերությունները

«Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանողը ու թողողը ողորմություն կ'գտնի:» Առակաց 28:13

2. Ճշմարտապես գնահատել իմ կարողությունները

«... բան չ'մտածել նրանից ավելի, քան թե արժան է մտածել, այլ մտածել պարկեշտ կենալ այնպես՝ ինչպես որ Աստված ամեն մեկին հավատքի չափը բաժանեց:» Հռովմայեցիս 12:3

«Բայց ամեն մեկը թող իր գործը կշռի, և ապա միայն իր անձի վրա պարծանք կ'ունենա, և ոչ թե ուրիշի վրա:» Գաղատացիս 6:4

3. Ծնորհակալ սրտով ուրախանալ իմ հաջողություններով

«Ի՞նչ ունես դու՝ որ չես առել. և եթե առել ես, ի՞նչու ես պարծենում չ'առածի պես:» Ա Կորնթացիս 4:7

4. Անձնուրաց ծառայել ուրիշներին

«Ոչինչ մի՛ արեք՝ կովասիրությունից կամ սնապարծությունից դրդված, այլ խոնարհամտությամբ ուրիշներին ձեզանից ավելի բարձր համարեք, ոչ միայն ձեր շահը փնտրեք, այլ նաև ուրիշներինը: Ունեցեք նույնպիսի մտածելակերպ, ինչպիսին որ Քրիստոս Հիսուսն ուներ:» Փիլիպպեցիս 2:3-5

5. Կամավորապես խոնարհեցնել իմ անձը

«Խոնարհեցեք Տիրոջ առաջին, և նա կ'բարձրացնի ձեզ:» Հակոբ 4:10

Հաջորդ քարոզի թեման
ԻՆՉՊԵ՞Ս ԱԶԱՏՎԵԼ ՄՈԼՈՒԹՅՈՒՆԻՑ
Ազատագրում
Հովիվ Մարո Խաչիկեան